Կին և քաղաքականությունը

Ամենամյա անվճար հավելված

Նոյեմբեր, 2007թ.

Փաստաշար

Իրենց իրավունքների համար կանանց պայքարի պատմությունից

1504 թվական: Իտալուհի Քրիստինա դե Պիզան հրատարակեց «Գիրք կանանց քաղաքի մասին», որում ապացուցվում էր, որ կանայք ունեն կրթության և քաղաքական ազդեցության իրավունք: Ժամանակակիցները գիրքն անտեսեցին:

1777 թվական: ԱՄՆ-ի բոլոր նահանգներն ընդունեցին օրենքներ, որոնք արգելում էին կանանց մասնակցելու ընտրություններին:

1790 թվական: Առաջին անգամ կանանց շահերի պաշտպանությամբ հանդես եկավ տղամարդ: Ֆրանսիացի փիլիսոփա դը Կոնդորսեն հրապարակեց «Կանանց քաղաքական իրավունքներ շնորհելու մասին» հոդվածը: 1792-ին գերմանացի մտածող Թեոդոր Գոթլիբ ֆոն Հիպպելը լույս ընծայեց «Կանանց կարգավիճակը բարելավելու մասին» գիրքը, որում կոչ էր անում կանանց իրավահավասարության: Ավելի վաղ կանանց քաղաքացիական իրավունքներ տրամադրելու դեմ ընդվզել էր նույնիսկ ֆրանսիացի մեծ փիլիսոփա-հանրագիտակ Ժան-Ժակ Ռուսոն, ով համոզված էր, որ կանայք ի բնե ի զորու չեն քաղաքացի լինելու:

1791 թվական: Հրապարակվում է ֆեմինիզմի առաջին փաստաթուղթը՝ «Կնոջ և քաղաքացուհու իրավունքների հռչակագիր»: Հռչակագրի հեղինակն էր ֆրանսիացի կին գրող Օլիմպիա դը Գուժը, որը մահապատժի ենթարկվեց 1793 թվականին: Դրանից հետո հեղափոխական Ֆրանսիայի կառավարությունն արգելեց կանանց քաղաքական ակումբները, իսկ տղամարդկանց հետ հավասար ընտրական իրավունքներ ֆրանսուհիները ստացան միայն 1945 թվականին:

1848 թվական: Կանանց իրավունքների գծով առաջին ժողովը տեղի ունեցավ Նյու Յորք նահանգի Սենեկա Ֆոլզ փոքր քաղաքում: Երկու օրվա բանավեճերից ու վիճաբանություններից հետո 68 կին և 32 տղամարդ ստորագրեցին Զգացմունքների հռչակագիրը, որը հիմք դարձավ ի պաշտպանություն կանանց իրավունքների շարժման զարգացման: Հարյուր տարի անց այս փաստաթղթի բազմաթիվ դրույթներ ընդգրկվեցին Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում:

1850 թվական: ԱՄՆ-ում ստեղծվում է ամերիկուհիների առաջին համազգային կազմակերպությունը՝ Կանանց ընտրական իրավունքների գծով ազգային ընկերակցությունը, որի գլխավոր նպատակն էր պայքարը հանուն կանանց ձայնի իրավունք տրամադրելու: Սուֆրաժիստուհիները կազմակերպում էին հանրահավաքներ և ցույցեր, գիտակցաբար խախտում էին հասարակական կարգը՝ կանանց իրավահավասարության խնդրի նկատմամբ ուշադրություն հրավիրելու համար: Հենց սուֆրաժիստուհիները սկսեցին տաբատ հագնել՝ այս կերպ սեռերի հավասարությունը, այդ թվում՝ նաև հագուստում ի ցույց դնելով:

1857 թվական: Պատմության մեջ առաջին կանանց ցույցը տեղի ունեցավ մարտի 8-ին Նյու Յորքում: Տեքստիլ ձեռնարկությունների բանվորուհիները բողոքում էին ցածր աշխատավարձերի և աշխատանքի վատ պայմանների դեմ:

1893 թվական: Համաշխարհային պատմության մեջ առաջինը կանանց ընտրական իրավունքներ տրամադրեցին Նոր Զելանդիան և ԱՄՆ նահանգներից մեկը՝ Կոլորադոն:

1901 թվական: Ստեղծվում է բուժքույրերի բանակային կորպուսը/Army Nurse Corps, և կանայք զինվորական ծառայության թույլտվություն են ստանում: Բարձրագույն զինվորական կոչումը, որը կարող էին նրանք ստանալ, գնդապետն էր: Ուշագրավ է, որ ամերիկուհիները բանակում ծառայելու իրավունք ստացան երկու տասնամյակ ավելի վաղ, քան ընտրական իրավունքներ:

1910 թվական: Կլարա Ցետկինը կին սոցիալիստների Երկրորդ միջազգային կոնֆերանսում առաջարկեց նշել Կանանց իրավունքների համար պայքարի միջազգային օրը: Եվրոպայում այդ օրն առաջին անգամ նշվեց 1911 թ. մարտի 19-ին: Ու միայն 1914-ին այդ օրն ստացավ մշտական գրանցում՝ մարտի 8-ը: 1977 թվականին ՄԱԿ-ը մարտի 8-ը հայտարարեց Կանանց միջազգային օր: «Պայքար» բառը տոնի անվանունից դուրս եկավ:

Արևիկ Պետրոսյան. «Պատիվ եմ համարում լինել հայկական պառլամենտարիզմի պատմության մեջ առաջին կին փոխխոսնակը»:
Հարցազրույցը Ա. Պետրոսյանի հետ՝ 3-րդ էջում

ՌԴ առողջապահության և սոցիալական զարգացման նախարար **Տատյանա Գոլիկովան:**
Կառավարությունում և Պետական Դումայում նրան կոչում են «բյուջեի թագուհի»...

Պակիստանի էքսվարչապետ **Բենազիր Բհուտոն**:
Ասում են՝ նրա անունը թարգմանվում է որպես «անգութ, անողոք»: Նա փայլուն կրթություն է ստացել Հարվարդում ու Օքսֆորդում և հոր համաձայնությամբ երբեք չադրա չի կրել...

ՌԴ տնտեսական զարգացման և առևտրի նախարար **Էլվիրա Նաբիուլինան:**
Ուսուցիչները հիշում են, որ նա խնդիրը լուծում էր երեք եղանակով...

Արգենտինայի նախագահ **Քրիստինա Կիրշները:**
Նա միշտ օգնել է ամուսնուն նրա քաղաքական կարիերայում, սակայն երբ երկրի ղեկավարը հասկացավ, որ իր կնոջ ժողովրդականությունն իրենից զգալիորեն բարձր է, որոշեց անցնել պլան մնալ...

Քաղաքականությունը կանանց գործն է,

ու դա արդեն ոչ մեկին չի զարմացնում

Վերջին ամիսը համաշխարհային քաղաքականության մեջ նշանավորվեց իրական իրավահավասարության ասպարեզում կանանց նոր նվաճումներով: Հոկտեմբերի 28-ին Արգենտինայի նախագահի ընտրվեց Քրիստինա Կիրշները: Քիչ ավելի վաղ խորհրդարանական ընտրություններում հաղթելու վճռականությամբ ութնամյա կամավոր տարագրությունից հետո հայրենիք վերադարձավ «Պակիստանի սև վարդը»՝ Բենազիր Բհուտոն: Իսկ Ռուսաստանում նոր կառավարությունը համալրվեց միանգամից երկու կին նախարարներով: Երկուսն էլ՝ Տատյանա Գոլիկովան և Էլվիրա Նաբիուլինան, բարձրակարգ մասնագետներ են համարվում իրենց շրջապատում: Այդ ընթացքում, ԱՄՆ-ում Նյու Յորք նահանգից դեմոկրատ սենատոր Հիլարի Քլինթոնը, հարցումների համաձայն, լրջորեն ամրապնդեց իր դիրքերը նախընտրական նախագահական մրցարշավում՝ առաջ անցնելով իր երկու հիմնական հանրապետական մրցակիցներից՝ Նյու Յորքի նախկին քաղաքապետ Ռուդոլֆ Ջուլիանիից և նախկին դերասան ու քաղաքական գործիչ Ֆրեդ Թոմփսոնից: Իրադարձությունների այս հորձանուտից անմասն չմնաց նաև Հայաստանը:

Հայոց խորհրդարանի պատմության մեջ առաջին անգամ փոխխոսնակի թափուր պաշտոնում ընտրվեց «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամ, ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արևիկ Պետրոսյանը:

Ընդ որում, ընտրությունը կատարվեց երեք կին թեկնածուներից, որոնցից մեկը՝ ՀՀԿ անդամ, ԱԺ գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի հանձնաժողովի նախագահ Հրանուշ Հակոբյանը, ինքնաբացարկ հայտնեց հօգուտ կոալիցիոն պայմանավորվածությունների, իսկ երկրորդը՝ ընդդիմադիր «Ժառանգություն» խմբակցության անդամ Անահիտ Բախշյանը, առաջադրվեց ի հեճուկս նույն այդ պայմանավորվածությունների: Ուշագրավ էին տղամարդ պատգամավորների մեկնաբանությունները, որոնք, ի դեպ, չափազանց գոհ էին, իրենց իսկ խոսքերով՝ «սեռական մեծամասնության կողմից քաղաքական պատկերացումների աճ» արձանագրելով: «Վերջապես մեր քաղաքական կյանքը մոտեցավ այն եզրագծին, երբ մենք կարող ենք չխնայել կնոջը՝ ներգրավելով այս աշխատանքին...»,- ասաց ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյանը՝ նկատելով, որ իր համար անընդունելի է ըստ սեռային պատկանելության պաշտոնների բաշխումը: Ի պատասխան՝ կինը, որին «ներգրավեցին» փոխխոսնակի պաշտոնում ոչ թե սեռի, այլ մասնագիտական որակների շնորհիվ, նկատեց, որ քաջ գիտակցում է պատասխանատվության աստիճանը:

Ինչևիցե, աշխարհն այլևս դադարել է զարմանալ մեծ քաղաքականությունում կանանց անունների հաճախակի հիշատակությունից: Հետաքրքիր է, որ Արգենտինայում նախագահի պաշտոնի համար պայքարում սրերը խաչաձևել էին երկու կին՝ մասնագիտությամբ իրավաբան, սենատոր Քրիստինա Կիրշները և «Քաղաքացիական կոալիցիա» խմբի առաջնորդ Էլիսա Կարրին: Վարդագույն տան տիրուհի դարձավ Քրիստինա Կիրշները՝ երկրի ներկայիս նախագահ Նեստոր Կիրշների կինը: Վերջին հանգամանքը, անտարակույս, օգնեց նրան առաջ անցնելու իր մրցակցուհուց, սակայն, ինչպես խոստովանեց ողջ համաշխարհային մամուլը, իր ժողովրդականությամբ նա պարտական է ինքն իրեն, այլ ոչ թե առաջին տիկնոջ կարգավիճակին: Իրականում նրա ճանապարհը մեծ քաղաքականություն սկսվել էր շատ ավելի վաղ, քան ամուսինը դարձել էր երկրի ղեկավար:

Զարմանալի չէր նաև Ռուսաստանի նախարարների նոր կաբինետում կանանց հայտնվելը: Բացառիկ ունակություններ, աշխատասիրություն և անձնական հմայք՝ այս եռամիասնության մեջ է նրանց հաջողության գաղտնիքը: Օրինակ՝ առողջապահության և սոցիալական զարգացման նախարար Տատյանա Գոլիկովային, ով մինչև իր պաշտոնի բարձրացումը ֆինանսների փոխնախարար էր, կառավարությունում և Պետական Դումայում անվանում են ոչ այլ կերպ, քան «բյուջեի թագուհի»: Երկար տարիներ նա զբաղվել է երկրի գլխավոր ֆինանսական փաստաթղթով և ապշեցնում էր բոլորին բյուջեի ցուցանիշների յոթանիշ թվերը մտապահելու և բյուջետային բոլոր մեխանիզմներին ու մեթոդիկաներին ազատ տիրապետելու կարողությամբ: Պատմում են՝ ֆինանսների նախարար Ալեքսեյ Կուդրինը տարեկան բյուջեի վրա աշխատանքն սկսում էր հերթապահ կատակով. «Ինձ՝ թեյ և Գոլիկովային»:

...Փորձելով հետ չմնալ ժամանակի հոսքերից՝ Հայաստանի Ազգային ժողովը վավերացրեց Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիան: Այս ոչ ծավալուն փաստաթուղթը 1954 թվականից՝ ուժի մեջ մտնելու պահից ի վեր, սպասում էր իր ժամին: Կոնվենցիայի էությունը շարադրված է առաջին երեք հոդվածներում, որոնք ամրագրում են կանանց իրավունքը՝ ընտրել և ընտրվել օրենքով սահմանված բոլոր ընտրովի պաշտոններում, ինչպես նաև զբաղեցնել ցանկացած պաշտոն հասարակական-քաղաքական ծառայությունում՝ տղամարդկանց հետ հավասար պայմաններում:

Թեպետ կոնվենցիային միացել են ավելի քան հարյուր պետություններ (Հայաստանը 121-րդն էր), դեռևս ոչ բոլոր երկրներն են պատրաստ այդ փաստաթղթում հռչակված իրավահավասարությունը կյանքի կոչելու: Դրա հետ մեկտեղ, դատելով աշխարհում նկատվող միտումներից՝ կանայք այլևս չեն ուզում հետածգել իրենց քաղաքական իրավունքների լիարժեք իրականացումը: Այնպես որ, Ազգային ժողովի կողմից վավերացված կոնվենցիան կսկսի Հայաստանում գործել միայն այն ժամանակ, երբ կանայք իրենք կփորձեն ավելի ակտիվ ջանքեր գործադրել այդ ուղղությամբ: Դա չի նշանակում, որ նրանք այդ ճանապարհին դիմադրության չեն հանդիպի: Չէ՞ որ դեպի քաղաքականություն տանող շքամուտքի դռները բացվում են ոչ բոլոր ցանկացողների համար, իսկ հետնամուտքի մոտ մշտական հրմշտոց է...

Միևնույն ժամանակ արժի չմոռանալ՝ քաղաքական բարձունքների հասնելու համար կինը պետք է տղամարդուց առնվազն տասնապատիկ խելոք, կրթված, ուժեղ լինի... Համենայն դեպս, այսպիսին է դեռևս հասարակության թելադրանքը...

Թամարա Հովնաթանյան

Հայկանուշ Մառք.

«Դիմա նոր ուղի պիտի հարթենք, ավելի ձիգ դեպի նպատակը»:

էջ 4

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՀԱՆՈՑ

«Լավ է ուշ, քան երբեք»...

Հայոց խորհրդարանը վավերացրեց Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիան

Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիան ընդունվել է 1953 թ. Նյու Յորքում, և մինչև այժմ դրան միացել է 120 պետություն: Այս տարի Հայաստանը, ի վերջո, վճռեց համալրել այդ ցուցակը, և հոկտեմբերի 23-ին ՀՀ Ազգային ժողովը վավերացրեց կոնվենցիան 96 «կողմ» ձայնով: Երկու պատգամավոր «դեմ» էր, իսկ մեկը՝ ձեռնպահ, սակայն նրանք, ինչպես պարզվեց քննարկման ընթացքում, բնավ էլ միակը չէին, ովքեր համակարծիք չէին Կոնվենցիայում ամրագրված գաղափարներին: «Կողմ» քվեարկած պատգամավորներից ոմանք հարկ չէին համարում թաքցնել իրենց թերահավատությունը:

Թեպետ Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիան կեսդարյա պատմություն ունի, այն առաջվա պես արդիական է, քանզի նվիրված է ժամանակակից հասարակությունում առայժմ չլուծված սեռերի իրավահավասարության խնդրին: Խոսքը, մասնավորապես, յուրաքանչյուր մարդու անմիջականորեն կամ էլ ազատ հիմունքներով ընտրված ներկայացուցիչների միջոցով իր երկրի կառավարմանը մասնակցելու իրավունքի մասին է: Հայրենի օրենսդիրների այս փաստաթղթին անդրադառնալու նախապատմությունը վերաբերում է 2002 թվականին, երբ շուրջ 40 կանանց կազմակերպությունների նախաձեռնությամբ անցկացվեցին խորհրդարանական լսումներ՝ այս կոնվենցիային միանալու հարցով: Սակայն հարցը լուծում չստանալով՝ բարեհաջող տեղափոխվեց ԱԺ հաջորդ գումարում և այնուհետև էստաֆետով հանձնվեց նորընտիր խորհրդարանին: Ապա նորից որոշ ժամանակ պահանջվեց, որ Սահմանադրական դատարանը քննի կոնվենցիայի համապատասխանությունը երկրի Հիմնական օրենքին: Ինչից հետո էլ այն, ի վերջո, հայտնվեց ԱԺ աշնանային նստաշրջանի օրակարգում:

Խորհրդարանում կոնվենցիան ներկայացրեց արտգործնախարարի տեղակալ **Գեղամ Ղարիբջանյանը**, որը վկայակոչելով ՍԴ որոշումը՝ նշեց, որ կոնվենցիայում ամրագրված սկզբունքները համահունչ են Հայաստանի Սահմանադրությանը: *«Կոնվենցիայի վավերացումն ավելի կնպաստի մեր երկրում ժողովրդավարության կայացման գործընթացին, քանի որ պետության կողմից երկրի հասարակական-քաղաքական կյանքին կանանց և տղամարդկանց հավասար մասնակցության ապահովումը ժողովրդավարության ամենահզոր չափանիշներից մեկն է»,*- ասաց նա: ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովում փաստաթուղթը դրական եզրակացության էր արժանացել, որն էլ հանձնաժողովի անունից ներկայացրեց պատգամավոր **Էռնեստ Սողոմոնյանը** («Բարգավաճ Հայաստան» խմբակցություն):

Դրան հաջորդած քննարկումը խորհրդարանում ներկայացված 12 կին պատգամավորներից միայն երկուսին հետաքրքրեց: **Լարիսա Ալավերդյանը** («Ժառանգություն»), առաջնորդվելով «լավ է ուշ, քան երբեք» սկզբունքով, ողջունեց կոնվենցիայի ընդունման նախաձեռնությունը. *«Ըստ երևույթին՝ մեր տղամարդկանց մեծամասնությունը, ի վերջո, հասունացել է այս կոնվենցիային միանալու համար»,*- ենթադրեց նա: Նրա խոսքերով՝ կոնվենցիան կոչված է պաշտպանելու նաև տղամարդկանց իրավունքները, որովհետև դրանում շարադրված մոտեցումների շնորհիվ հայ կանայք վերջապես կկարողանան նրանց հետ կիսել քաղաքական կյանքի բեռը: Ըստ պատգամավորի՝ փորձը ցույց է տալիս, որ այդ բեռը չափազանց ծանր է տղամարդկանց համար, և այդ գերծանրաբեռնվածության պատճառով է երկիրն այս վիճակում: *«Մենք շարունակում ենք մնալ աղքատ, որովհետև կանանց քաղաքական դաշտից դուրս մղելու շռայլություն ենք թույլ տալիս մեզ»,*- ամփոփեց Ալավերդյանը վերջում կամենալով, որ կոնվենցիային միանալը չդառնա հերթական ձևական քայլ:

Հեղինե Բիշարյանը («Օրինաց երկիր») իր հերթին շարունակեց թեման՝ հիշեցնելով, որ վերջերս նույնիսկ քննարկման չարժանացած նախաձեռնությունը՝ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման պետական երաշխիքների մասին» օրինագիծը, ևս նույն նպատակն ուներ, ինչ կոնվենցիան: *«Սահմանադրությունից բխում է, որ մեր երկրում և կանայք, և տղամարդիկ հավասար իրավունքներ ունեն, բայց նույնիսկ անզեն աչքով նկատելի է, թե որքան սահմանափակ են կանանց իրավունքները քաղաքական դաշտում: Ես ամենևին չեմ ուզում ասել, որ բոլոր կանայք պետք է նախարարներ, վարչության պետեր լինեն, բայց ակնհայտ է, որ մենք ամեն քայլափոխի խախտում ենք Սահմանադրությունը: Շատ տղամարդիկ դեռ համարում են, թե կնոջ տեղը խոհանոցում է, բայց կարծում եմ, մենք արդեն դուրս ենք եկել այդ վիճակից»:*

Տղամարդ պատգամավորներից կոնվենցիայի մասին կարծիք հայտնելու ցանկացավ միայն **Արմեն Աշոտյանը** (ՀՀԿ). *«Ես գենդերային խնդիրների մեխանիկական լուծման կողմնակից չեմ: Եթե նման հարցադրումներ կան, դրանք բովանդակային մոտեցման կարիք ունեն: Ըստ էության՝ խնդիրը մեր հոգեբանության ու մտածելակերպի մեջ է: Ու եթե նույնիսկ օրենքով ամրագրենք, որ մարզպետների 1/3-ը պետք է կին լինի, ապա այդ ճանապարհով գենդերային հարց չի լուծվի, պարզապես մի քանի ընտանիք կսկսի ավելի լավ ապրել»:*

Եզրափակիչ ելույթում փոխարտգործնախարար Գեղամ Ղարիբջանյանը նկատեց, որ նոր խորհրդարանում խնդրո առարկա կոնվենցիան առաջինն էր, որ իսկապես շահագրգիռ քննարկում առաջացրեց: Ինչ վերաբերում է կոնվենցիան ուշ վավերացնելուն, ապա, նրա կարծիքով, դա ինչ-ինչ եզրահանգումների առիթ չի հանդիսանում: Պարզապես՝ կան երկրներ, որոնք ճակատագրի կամքը երկրորդ աշխարհամարտից հետո են դարձել ՄԱԿ-ի անդամ և 54-ին ընդունել են կոնվենցիան, իսկ որոշ երկրներ էլ այս փաստաթղթին անդրադառնալու հնարավորություն են ստացել ավելի ուշ:

Թե ի՞նչ կփոխի կոնվենցիայի վավերացումը մեր կյանքում՝ դժվար է ասել, սակայն պետք է փաստել, որ որոշ տղամարդկանց մոտ սեռերի հավասարության ընկալման խնդիրները երևացին անգամ կոնվենցիայի քննարկման փուլում: Այսպես, ի պատասխան Լարիսա Ալավերդյանի հարցի, թե ինչո՛ւ կոնվենցիան ավելի վաղ չի վավերացվել և ինչո՛վ է այն ավելի լավ օրեր առաջ մերժված հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին օրինագծից, արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անունից հանդես եկող զեկուցող Էռնեստ Սողոմոնյանը խիստ անկեղծացավ: Ընդ որում, նա նույնիսկ չփորձեց թաքցնել այն, ինչ ոմանք թեպետև մտածում, բայց խնամքով թաքցնում են: Ահա այդ մեջբերումը բառացի.

«Մարգարեթ Թեթչերը մի առիթով ասել է՝ ափսոս, որ Մեծ Բրիտանիայի խորհրդարանում կանայք շատ չեն, այդ դեպքում նրանք ավելի քիչ աչքի կընկնեին: Մեր խորհրդարանում կանայք աչքի են ընկնում, մասնավորապես դուք, սիրելի տիկին Ալավերդյան... Քանի որ նախագիծը միտված է նաև նրան, որ հավասար իրավունքներ ապահովվեն նաև տղամարդկանց համար, ապա թույլ տվեք նկատել. խելացի տղամարդիկ կանանց հարցերին չեն պատասխանում, կանանց հետ չեն վիճում, լուռումունջ լսում են և անում ճիշտ հակառակը: Ես այսօր այդպես էլ կվարվեմ»,- հայտարարեց խորհրդարանականը, որը մի քանի րոպե առաջ ներկայացնում էր գլխադասային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

Համարձակվում ենք նկատել, որ տրամաբանական հարցերին նման անհարիր պատասխաններ տալը վկայում է ոչ թե խելքի, այլ ընդամենը կարծրատիպային մտածողության մասին, որի դեմ ոչ մի կոնվեն-

ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿ

Իմ կինը՝ նախարա՞ր: Ես միայն ուրախ կլինեմ

Այն, որ Ազգային ժողովում կին պատգամավորների թիվը քչից-շատից, բայց աճի միտում է դրսևորում, մենք կարողացանք համոզվել անցած ընտրությունների արդյունքներով: Ինչը չես ասի գործադիր իշխանության մասին, որում կին նախարարների սուր պակաս է զգացվում: Անկախության տարիներին ունեցել ենք ընդամենը չորս կին նախարար, ներառյալ՝ մշակույթի գերատեսչության ներկայիս ղեկավարը: Առաջինը Կարինե Դանիելյանն էր՝ 1990-1991-ի բնապահպանության նախարարը, ապա Հրանուշ Հակոբյանը՝ 1996-1998 թթ. սոցապահովության նախարարը: Իսկ ահա Թամարա Պողոսյանին, որին 2003-ին քաղաքական կարգադրագրով առաջ քաշեցին՝ նշանակելով մշակույթի նախարար, ու մինչ նա կհասցներ դրսևորել իրեն, հետ մղեցին: Մի խոսքով, իրական իշխանությունն ու կինը շարունակում են մնալ չհատվող հարթություններում: Եվ այդ հանգամանքը, ինչպես պարզվում է, մտահոգում է մեր զրուցակիցներին՝ կանանց և տղամարդկանց...

Զարմանալիորեն, տղամարդիկ կառավարությունում իգական սեռի ներկայացվածության ամենաջերմ ջատագովներն էին: Շատերը պատրաստ էին «տեսնել» կնոջը անգամ երկրի վարչապետի պաշտոնում: Դրանց թվում էին մի շարք նախարարությունների աշխատակիցներ և նույնիսկ... հոգևորականներ: Սրբազան հայրերից մեկը տվեց այն կնոջ անունը, որը, նրա կարծիքով, հաջողությամբ կարող է կատարել պատասխանատու պաշտոնը՝ Հրանուշ Հակոբյանը: Ավաղ, կառավարության ղեկավարի պաշտոնին հավակնող կանանց անունները կարծես թե սրանով էլ սահմանափակվեցին: Հարցման մասնակիցների կարծիքով՝ ընտրությունը մեծ չէ և, ընդհանրապես, կին քաղաքական գործիչները ակնհայտորեն հանրաճանաչության պակաս են զգում:

Ընդհանուր առմամբ մեր զրուցակիցները պատրաստ էին վստահել թույլ սեռին մշակույթի, սոցիալական հարցերի, առողջապահության ու մեկ էլ՝ կրթության նախարարների պորտֆելները: Ոմանք, ի դեպ, նշում էին, որ կինը կարող է հեշտորեն տնօրինել նաև գյուղատնտեսությունը: Ճիշտ է, առանց անասնաբուծության: *«Անասնապահների հետ շփվելը հեշտ չէ: Այստեղ պետք է նաև հայհոյել սովորել և... Մի խոսքով, էս կնկա գործ չի»:*

Կնոջը՝ որպես ուժային կառույցի ղեկավար պատկերացնելը անկարող էին նույնիսկ աշխատանքի բնույթով ստեղծագործական երևակայությամբ օժտված մարդիկ: Մասնավորապես, պաշտպանության, ներքին գործերի ու առավել ևս՝ ազգային անվտանգության նախարարի պաշտոններում կանանց հայտնվելու հնարավորությանը հրաժարվում էին հավատալ հեռուստատեսության աշխատակիցները, դերասանները և նույնիսկ կրկեսի աշխատողները: Ի դեպ, նրանք կտրականապես դեմ էին նաև կին-ֆինանսիստին. *«Այստեղ «չոր» մարդ է պետք, ուժեղ կամքի տեր»:* Հավանաբար, կամքի ուժն անհրաժեշտ է՝ պետության գրպանը ձեռքը տանելու գայթակղությանը դիմադրելու, իսկ այսպես կոչված «չորությունը»՝ հասարակության ֆինանսական պահանջարկները «չորով» մերժելու համար: Միայն թե հասկանալի չէ, թե ինչու այնուամենայնիվ կանայք այս չափանիշներին չեն համապատասխանում և ֆինանխարարի պաշտոնը նրանց համար արգելափակված է:

Փոխարենը հարցվածները պատրաստ էին համակերպվել արդարադատության ոլորտի կին նախարարի հետ:

Նախարարի պաշտոնին հավանական թեկնածուների շարքում կային նաև անսպասելի «նշանակումներ»: Դիցուք, գյուղատնտեսության նախարար, չգիտես ինչու, «կարգեցին» սեփականաշնորհման գերատեսչության ղեկավար Կարինե Կիրակոսյանին: Իսկ առողջապահության ոլորտի վերաբերյալ, որտեղ, ի դեպ, աշխատողների մինչև 80 տոկոսը կանայք են, տարօրինակ պատասխան ստացանք: *«Առողջապահությունը հաստատ կարող էր կին ղեկավարել,*- հայտարարեց Հռիփսիմե Մանուկյանը՝ նախարարություններից մեկի աշխատակցուհին: - *Սակայն չեմ պատկերացնում, թե ում կարելի է այդ պաշտոնը վստահել...»:*

Ուշագրավ է, որ կանայք ենթադրական հարցին՝ կհամաձայնեի՞ք արդյոք նախարար դառնալ, խիստ բացասական արձագանքեցին: Իսկ տղամարդիկ այդ հարցն ընկալեցին որպես կատակ, որում, ինչպես հայտնի է, միշտ ճշմարտության բաժին կա: *«Գոյություն ունի կարծրատիպ՝ տղամարդն ավելի լավ ղեկավար է, քան կինը,*- ասում է մանկավարժ Արմինե Մարկոսյանը: - *Ու եթե տղամարդը մի սխալ է կատարում, ապա նրան ներում են: Իսկ եթե «սայթաքել» է պաշտոնավոր կինը, ապա երկար հիշում են... Ուստի ավելի լավ է ուսուցչուհի, շարքային ծառայող, ի վերջո՝, տնային տնտեսուհի լինել, քան փորձել փոխել հասարակության մտածողությունը»:*

Նշենք, որ կարծրատիպեր, անշուշտ, կան, սակայն դրանց դեմ պայքարելու առանձնակի ցանկություն՝ կանանց մոտ այդպես էլ չհայտնաբերեցինք:

Մինչդեռ, ի զարմանս մեզ, տղամարդկանց կարծիքն այլ էր: *«Իմ կինը՝ նախարա՞ր: Աստծո սիրուն: Ես դրա համար միայն ուրախ կլինեմ,*- ասում է քանդակագործ Վահե Մինասյանը: - *Կենցաղը, իհարկե, կտուժի: Բայց ես պատրաստ եմ աջակցել նրան այս լուրջ ձեռնարկման մեջ: Եթե հարկ լինի՝ երեխաներին կնայեմ, կարտոլ էլ կտապակեմ... Միակ մտահոգող հանգամանքը՝ նա կսկսի ինձնից շատ փող աշխատել: Բայց հո պե՞տք է ինչ-որ բան «զոհաբերել»: Ի վերջո, կինը անհատականություն է, այլ ոչ թե գիպս, որից տղամարդը կերտում է իր երկրորդ կեսին»:*

Զրուցեց Ասյա Ծատուրովան

Հետադարձ կապ

Ինչո՞ւ կանայք շրջանցեցին սոցիալական հանձնաժողովը

Վերջերս Ընտրական օրենսգրքում կատարված փոփոխությունները գեղեցիկ սեռին հնարավորություն տվեցին հայոց խորհրդարանում ավելի մեծ թվով ներկայացված լինել, քան առաջ էր: Ենթադրում եմ՝ խոսքը ոչ միայն ֆիզիկական ներկայության մասին է, այլև կանանց շահերի ներկայացվածության, իշխանությունում «կնոջ ձայնը» լսելի դարձնելու մասին: Իսկ ի՞նչ ունենք մենք իրականում: Խորհրդարանում կանայք կան, իսկ կնոջ կարծիքը, վստահ չեմ, որ ներկայացված է: Ու կասկածների համար ծանրակշիռ հիմքեր կան:

Վերջերս մենք մի բլից-հարցում անցկացրեցինք՝ առաջարկելով մայրաքաղաքի և հանրապետության մարզերի ավելի քան 80 կանանց ի թիվս այլ հարցերի պատասխանել նաև «Դուք ի՞նչ սպասելիքներ ունեք կին պատգամավորներից» հարցին: Թեպետ դրանք տարբեր մարդիկ էին՝ տարբեր տարիքի, մասնագիտության և կրթական մակարդակի ու կարգավիճակի, նրանց բոլոր ակնկալիքները այս կամ այն կերպ հանգում էին սոցիալական ոլորտին: Ըստ էության, ոչ մի նոր բան մենք չհայտնաբերեցինք, քանզի նույն այդ սոցիալական շեշտադրումները բացահայտել են նաև հանրապետությունում վերջին շրջանում անցկացված բոլոր սոցիոլոգիական հարցումները:

Ինչ վերաբերում է մեր հարցման մասնակիցներին, ապա նրանք խոսում էին գործազրկության և աղքատության, գյուղում աշխատանքի ծանր պայմանների, կնոջ առողջությունը քայքայող կենցաղի մասին... Բերում էին աշխատանքի շուկայում կանանց խտրականության օրինակներ, առավել պատրաստվածները նշում էին աշխատանքային օրենսդրության գենդերային վերլուծության անհրաժեշտությունը: Շատ էին խոսում մայրության ու մանկության պահպանության, ժողովրդագրության, ապագա սերնդի մասին հոգատարության և այս ուղղությամբ ազգային ռազմավարության բացակայության մասին: Նշում էին առողջապահության ոլորտի «առողջացման» անհրաժեշտությունը...

Պատրա՞ստ են արդյոք խորհրդարանում կանայք դառնալու այդ ակնկալիքների խոսափողը: Գուցե դեռ վաղ է ինչ-ինչ եզրակացություններ անել, սակայն մի փաստ իրոք մտահոգում է: Սոցիալական, առողջապահության և բնապահպանության հարցերի խորհրդարանական հանձնաժողովում, չգիտես ինչու, ոչ մի կին չկա... Իհարկե, ուրախալի է, որ նրանց գրեթե կեսը կենտրոնացել է կրթության, գիտության և երիտասարդության հարցերի հանձնաժողովում: Բայց թե ինչո՞ւ են նրանք այնուամենայնիվ անտեսել սոցիալական ոլորտը՝ ինձ համար, և կարծում եմ՝ նաև շատ կանանց համար, հանելուկ է մնում: Եթե նրանք դրանով փորձել են կոտրել կարծրատիպը, որ կանայք պետք է զբաղվեն միայն սոցիալական հիմնախնդիրներով, ապա դրանից չէ, որ պետք է սկսեին: Նույնիսկ բարեկեցիկ երկրներում կին խորհրդարանականներն իրենց թույլ չեն տալիս հրաժարվել սոցիալական հանձնաժողովներում աշխատելուց: Էլ չենք ասում այն մասին, որ խորհրդարանում կանանց թվի ավելացմանը ձգտում են հենց այն նպատակով, որ ընդլայնեն օրենսդրի աշխատանքում սոցիալական բաղադրիչը: Իհարկե, կարելի է ենթադրել, որ մեր պարագայում կանայք պարզապես չեն բավարարել բոլոր հանձնաժողովների համար: Բայց այդ դեպքում ինչո՞ւ հենց սոցիալականը խաղից դուրս վիճակում հայտնվեց:

Զինա Սարգիզովա
«Կանայք հանուն խաղաղության» կոալիցիա

Հ.Գ. Այս խորագիրը բացելով՝ հրավիրում ենք ընթերցողներին «Կինը քաղաքականության մեջ» թեմայով անկեղծ զրույցի: Կարող եք մեզ զանգահարել 52-73-96 հեռախոսահամարով կամ գրել nvremya@arminco.com (հավելվածի համար):

Հաջողության բանաձևը

Արևիկ Պետրոսյան.

«Համոզված եմ՝ ցանկացած իրավիճակից ելք կա»

Նրա քաղաքական կարիերայի վերելքը իրավամբ կարելի է սրընթաց համարել: Առաջին հաջողությունները մասնագիտական էին... երբ գերազանցությամբ ավարտելով Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը և ընդունվելով ասպիրանտուրա՝ սկսեց աշխատել ՀՀ նախագահի աշխատակազմում: Պաշտպանեց թեկնածուական թեզը, իսկ արդեն 26 տարեկանում նրան նշանակեցին արդարադատության փոխնախարար: 30 տարեկանում դառնում է ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի փոխնախագահ, 35-ում՝ 2007-ի խորհրդարանական ընտրություններից հետո՝ նա պատգամավոր է, ԱԺ մշտական հանձնաժողովի ղեկավար և շուտով՝ փոխխոսնակի պաշտոնի թեկնածու: Համաձայնեք՝ կարիերային նման նվաճումներին կարող է նախանձել ցանկացած տղամարդ...

Մեր զրույցը մարդու իրավունքների պաշտպանության խորհրդարանական հանձնաժողովի ղեկավար, «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունից ԱԺ պատգամավոր Արևիկ Պետրոսյանի հետ տեղի է ունեցել մի քանի օր շուտ, քան հայտնի դարձավ, որ նրա թեկնածությունն առաջադրվելու է ԱԺ փոխխոսնակի թափուր տեղի համար:

Ո՞րն է այս երիտասարդ համակրելի կնոջ հաջողության գաղտնիքը, ում համար քաղաքական կարիերան դարձել է մասնագիտության տրամաբանական շարունակությունը: Ինչպե՞ս է նրան հաջողվում հաղթահարել այս ճանապարհին ծագած բոլոր խոչընդոտները: Ինձ թվում էր, թե նրա հետ զրուցելով՝ ես հեշտ ու հանգիստ կստանամ այս հարցերի պատասխանը: Պարզվեց՝ դա այդքան էլ դյուրին չէ: Նա ազատ և անկեղծ զրուցակից է, սակայն դրա հետ մեկտեղ՝ զգուշավոր: Քննադատորեն է վերաբերվում ինքն իրեն և բավական խիստ է մյուսներին տված գնահատականներում: Այս ամենի հետ՝ նաև կուռ, ներքին կարգապահություն, որն էլ, հավանաբար, օգնում է հստակ նպատակներ դնել և հասնել դրանց: Թերևս, այսքանն ինձ հաջողվեց նկատել մեր զրույցի ընթացքում կամ, ավելի ճիշտ՝ դա այն էր, ինչ նա կամենում էր բացել օտար հայացքի առաջ: Փոխարենը հաճույքով պատմեց իր գլխավորած հանձնաժողովի գործունեության մասին. թե ինչպես է փորձում կապեր հաստատել և համագործակցել հասարակական կազմակերպությունների հետ, ներգրավել երիտասարդությանը: Թեպետ ԱԺ

այս նոր հանձնաժողովն ստեղծվել է ընդամենը մի քանի ամիս առաջ, ժողովուրդը հիմնավորապես հեղեղել է նրան գանգատներով ու առաջարկություններով, որոնց հոսքը չէր ընդհատվել նույնիսկ արձակուրդի ամսին՝ օգոստոսին: Փորձում ենք ժամանակին արձագանքել բոլոր նամակներին, պատասխանը չձգձգել՝ ասում է Արևիկ Պետրոսյանը. չէ՞ որ դրանց հետևում մարդիկ են և նրանց

- Համարվում է, որ քաղաքական կարիերան նպատակ է, որին պետք է ենթարկել ողջ կյանքը: Համաձա՞յն եք նման հարցադրմանը:

- Կարծում եմ՝ կարիերայի ձգտումը չպետք է դառնա կյանքի և քաղաքական գործունեության միակ նպատակը: Առողջ կարիերիզմը կարող է լինել անձի բնավորության գիծ, բայց չճնշել, չղեկավարել մարդուն՝ հանուն պաշտոնեական առաջխաղացման: Քաղաքականությամբ զբաղվող յուրաքանչյուրի համար խիստ կարևոր է ջանքերի և արդյունքի ներդաշնակ նույնականությունը: Դրա հետ մեկտեղ, քաղաքականության մեջ իր ճանապարհը չի կարող վերածվել անձնական հավակնությունների բավարարման միջոցի:

- Իսկ ի՞նչ կասեք այս ճանապարհին ծագած խոչընդոտների և դրանք հաղթահարելու դժվարությունների մասին:

- Չէի ցանկանա խոսել դժվարությունների մասին, քանի որ համարում եմ, որ գոյություն չունեն անհաղթահարելի խոչընդոտներ: Համոզված եմ, որ ցանկացած իրավիճակից ելք կա: Կարևորը վճռականորեն սկսելն է, իսկ վստահությունը հետո է գալիս: Ինձ համար գլխավորը պատվախնդրությունն է, որ եթե ինձ գործ է վստահվել, ես այն պետք է մինչև վերջ հասցնեմ: Նման դիրքորոշումը միշտ օգնում է առաջ ընթանալ:

- Արդյոք կա՞ մի բան, որը Դուք թույլ չէիք տա Ձեզ երբևէ անել:

- Երբեք որևէ մեկին գիտակցաբար չեմ վնասի: Ամեն ինչում սիրում եմ շիտակություն և անկեղծություն: Եթե նույնիսկ գիտեմ, որ իմ ուղղամտությունը դուր չի գալիս, միևնույն է՝ անկեղծորեն կարտահայտեմ իմ կարծիքը՝ նայելով մարդու աչքերին: Փորձում եմ կյանքում հետևել այս սկզբունքին:

- Իսկ ներել կարողանո՞ւմ եք:

- Ընդհանուր առմամբ՝ այո, թեպետ լինում են նաև դեպքեր, երբ դա ինձ չի հաջողվում...

- Որքանո՞վ են տարածվում Ձեր սկզբունքները ընտանեկան հարաբերությունների վրա:

- Իմ ընտանիքը ես ու հնգամյա դստրիկս՝ Տաթևիկն է, որը, ի դեպ, սիրում է անկեղծ և իր տարիքի համար բավական լուրջ հարցեր տալ: Խոստովանեմ՝ դրանց ոչ միշտ է հաջողվում դյուրին պատասխան գտնել: Թերևս, միակ բանը, որ ինձ անհանգստացնում է, այն է, որ ես նրան քիչ ժամանակ եմ տրամադրում: Ինձ հանգստացնում եմ նրանով, որ այն ժամանակահատվածը, երբ մենք միասին ենք, առավելագույնս հագեցած է: Մեկ էլ հանկարծ կհայտարարի, որ երբ մեծանա, չի թողնի, որ ես աշխատեմ, և հոգ կտանի իմ մասին: Տաթևիկիս հետ շփումը ինձ հսկայական ուրախություն է պարգևում և բավականացնում ողջ օրվա համար...

- Վերջերս Ձեր ղեկավարած հանձնաժողովը և անձամբ դուք բացասական եզրակացություն տվեցիք տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին օրինագծին: Ո՞րն է պատճառը, մի՞թե այս խնդիրը արդիական չէ հայ հասարակության համար:

- Եթե դատելու լինենք իմ անձնական փորձով, ապա ես մեզանում չեմ տեսնում տղամարդկանց ու կանանց միջև բացահայտ անհավասարության դրսևորումներ: Բացի այդ, ի տարբերություն բազմաթիվ այլ երկրների, մեր օրենսդրությունը երկու սեռերին էլ երաշխավորում է հավասար իրավունքներ: Իսկ ինչ վերաբերում է հնարավորությունների հավասարությանը, ապա այս գաղափարի դեմ մենք ոչինչ չունենք, միայն թե ոչ վերոհիշյալ օրինագծի կոնտեքստում: Իմ կարծիքով՝ այն չէր պարունակում իրացման կոնկրետ մեխանիզմներ: Չգիտեմ՝ որքանով հիմնավոր թվացին մեր փաստարկներն օրինագծի հեղինակին, բայց մենք փորձեցինք նրան համոզել: Ընդհանուր առմամբ, համարում եմ, որ այս խնդրի լուծումը ոչ թե նոր օրենքների, այլ կանանց առաջխաղացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելն է, որպեսզի կինը քաղաքականությունում իրեն լիարժեք ու ինքնաբավ զգա:

- Ի՞նչ է, այնուամենայնիվ, անհրաժեշտ կնոջը քաղաքականությունում իրեն դրսևորելու համար:

- Կինը մնում է կին, և նա պետք է հոգեպես հանգիստ, հավասարակշռված լինի, ինչը հնարավոր է այն դեպքում, երբ իր ընտանեկան անդորրն ու մթնոլորտն այնպիսին են, որ հնարավորություն են տալիս ակտիվ լինելու և դրսևորելու իրեն ոչ միայն քաղաքականությունում, այլև հասարակական կյանքում, ցանկացած ոլորտում:

- Դուք պատրա՞ստ եք պաշտպանելու կանանց շահերը:

- Բնականաբար, որպես իրավաբան՝ ես պարտավոր եմ օգտագործել իմ մասնագիտական կարողությունները կանանց շահերի պաշտպանության համար և նրանց առնչվող խնդիրների լուծման ուղիներ փնտրել: Միայն թե լուծումները պետք է իրատեսական լինեն, հիմնավորված և հաշվի առնեն մեր հայ իրականության առանձնահատկությունները: Այստեղ շատ կարևոր է ամեն ինչ մեխանիկորեն չփոխառել. միջազգային փորձի հաջողված օրինակները պետք է սերտակցեն մեր մտածելակերպի հետ:

Զրուցեց Կարի Ամիրխանյանը

«Կինը և քաղաքականությունը» շնորհավորում է Արևիկ Պետրոսյանին՝ փոխխոսնակի պաշտոնում ընտրվելու առթիվ և մաղթում նորանոր հաջողություններ:

No comment

«Կանայք և քաղաքականությունը» թեմայով տղամարդկանց ամբիոն տրամադրելու գաղափարը ծագեց մեր հրապարակումներին ստացված մի շարք արձագանքներից հետո: Հետևելով դրանց՝ մենք փորձեցինք ի մի բերել բոլոր կարծիքները՝ որոնք, լինեն դրանք «կողմ» թե «դեմ», հետաքրքիր էին իրենց փաստարկումներով: Արժանին մատուցելով մեր ընթերցողների անկեղծությանը՝ առաջարկում ենք նրանց լսել: Առայժմ՝ առանց մեկնաբանությունների:

Ուրիշ էլ ո՞վ, եթե ոչ կինը կարող է զգալ սուտը

Միքայել Բարսեղյան, *թարգմանիչ*

«Շատ կարևոր է, որ կինը, այնուամենայնիվ, լինի քաղաքականությունում, դա պարզապես անհրաժեշտություն է: Նրա բնածին խելքը, նրբանկատությունը, հանդուրժողականությունը, ցանկացած իրավիճակից հնարամտորեն դուրս գալու կարողությունը՝ այս ամենը բնորոշ են սեռին, որին, չգիտես ինչու, թույլ են կոչում: Տղամարդիկ ավելի հաճախ գերադասում են այլընտրանքը՝ փոխզիջման փոխարեն: Իսկ կինը զուտ բնազդորեն կռահում է, թե որտեղ հետևահանջը կարող է իր վրա թանկ նստել, իսկ որտեղ միակ ռազմավարական քայլը փոխզիջումն է: Քաղաքականությունը մեծ խաղ է, որն անմասն չէ բլեֆից: Եվ ով, ասացեք խնդրեմ, եթե ոչ կինը կարող է զգալ սուտը»:

Պատկերացրեք, եթե հանկարծ նրանց դուր գա այդ զբաղմունքը

Արմեն Մուրադյան, *փոխգնդապետ*

«Երբ քաղաքական ասպարեզում ի հայտ են գալիս մեկ-երկու կանացի դեմք, դա դեռ ոչինչ, նույնիսկ հաճելի է, աչք է շոյում: Սակայն պատկերացրեք, որ հանկարծ կանանց դուր գա այդ «զբաղմունքը» և նրանք պաշարեն քաղաքականությունը: Սարսափելի է պատկերացնելն անգամ... Տեղի կունենա հեղափոխություն՝ դերերի ու պարտականությունների վերագնահատում. տղամարդը կհայտնվի խոհանոցում և ստիպված կլինի լվացք անել, իսկ կինն ազատ կզգա իրեն «վերևում» հրամաններ արձակելով և երկիր ղեկավարելով: Քաղաքականությունը, իմ կարիքով, կնոջ գործ չէ: Չէ՞ որ դա պատերազմներ են, արյունահեղություն, աղետ, դաժանություն և մահ: Քաղաքականությունը փոխում է մարդուն, դարձնում դաժան և անողոք: Մի՞թե կարելի է թույլ տալ, որ կնոջը բնորոշ լինեն այս հատկությունները»:

Ես կնատյաց չեմ, պարզապես ամեն ինչ նկատում եմ

Ռուբեն Հուրունց, *գործարար*

«Երգիծաբաններից մեկը շատ դիպուկ է ասել. «Կինը գնդակ է՝ ընդ որում, թափառող. մտնում է սրտի մեջ, հարվածում գրպանին և կողքից դուրս գալիս»: Իսկ հիմա մտածեք, թե ինչ կլինի, եթե հանկարծ կնոջ խելքին փչի քաղաքականությամբ զբաղվել... Ամեն ինչ դժոխքի բաժին կդառնա: Ինչպե՞ս կարող է կինը դրսևորել իրեն քաղաքականության մեջ, եթե նա նենգ ու փառամոլ է: Բայց չկարծեք, թե կնատյաց եմ, պարզապես ամեն ինչ նկատում եմ... Կյանքում շատ բան եմ տեսել ու համապատասխան եզրակացություններ արել: Քաղաքականությունում, իմ կարծիքով, պետք է լինեն բարձր բարոյականության, ուժեղ կամքի տեր ու վեհանձն մարդիկ: Իսկ վերջինը հատկապես կանանց համար անընդունելի է: Մի՞թե այդպես չէ»:

Կարծիքները հավաքեց Կարի Ամիրխանյանը

Անցյալ ոչ կորուսյալ

Մեր լուսավոր անցյալն ու սնգուրված ներկան

Վերջին ժամանակներս արդի լրատվամիջոցներում մի ուշագրավ օրինաչափություն է նկատվում. շարունակ շուկա են մտնում կանանց հանդեսների նորանոր անուններ: Դրանցից շատերը թիթեռի կյանք են ունենում, սակայն նորերը ստեղծելու ջանքերը չեն սպառվում: Հավանաբար համանման օտարալեզու հանդեսների լայն սպառումն է նորահայտ խմբագիրների ոգևորության աղբյուրը: Դատելով այդ հանդեսների բովանդակությունից, որոնք, ի դեպ, միմյանցից գրեթե չեն տարբերվում, կարելի է մտածել, որ ժամանակակից հայ կանայք տառապում են մշտապես երիտասարդ մնալու և հրապուրիչ տեսք ունենալու, դիետաներ պահելու, արվեստով շպարվելու ու նորաձև հագնվելու, աստղերի անձնական կյանքի գաղտնիքները բացահայտելու և տղամարդկանց սերն ու ուշադրությունը մշտապես բորբոք պահելու հոգսերով: Մի՞թե այդպես է:

Հարկ է նաև նշել, որ այսպես կոչված «գլամուր ոճի» հայալեզու կրկնօրինակները, չգիտես ինչու, առաջնորդվում են արտասահմանյան բնագրերի առավել հետամնաց նմուշներով և անուշադրության են մատնում մի շարք կանանց հանդեսների վերջին տարիների՝ շեշտադրումներ փոխելու փորձերը: Մասնավորապես աստիճանաբար հրաժարվելու հիմար, եսասեր, տղամարդուն հաճոյանալու վրա սևեռված տիկնիկի կերպարից հօգուտ առավել տարածված իմիջի՝ անկախ, ինքնավստահ գործարար կնոջ: «Հայ գլամուրում» այս նոր շեշտադրումները, ավաղ, առայժմ չեն նկատվում: Դրանց էջերում ծավալվում է կյանքի և հենց կնոջ նկատմամբ սպառողական վերաբերմունքի քարոզչությունը և կինը ներկայանում է սոսկ որպես իր, որը պետք է ունենա ապրանքային տեսք:

Երևույթը, սակայն, ուշագրավ է նրանով, որ հայ մամուլը կանանց հանդեսների հրատարակման բավական հին պատմություն ունի (սկսած 1862 թվականի «Հավերժահարսից» և «Կիթառից»), հետևաբար այսօր մեզ անցյալի ու ներկայի զուգահեռներ գծելու բացառիկ հնարավորություն է ընձեռվում:

Հայուհիներին հասցեագրված առաջին պարբերականների քաղաքականությունն ակնհայտորեն կանանց և հասարակության առաջընթացին էր ուղղված:

Սարգիս Փափազյանի **«Հավերժահարսում»** (1862, Զմյուռնիա) տպագրվում էին համաշխարհային գրականության գանձարանի նմուշներ՝ ընտիր հայերեն թարգմանությամբ, ճանաչողական նյութեր և քաղաքական, ընկերային կյանքի թարմ լրատվություն: *Էլպիս Կեսարացյանի* **«Կիթառը»** (1862, Կ. Պոլիս) փորձում էր հայ օրիորդների ու տիկինների մեջ արթնացնել ազգասիրություն, ուսման սեր, քաղաքավարություն ու համարձակություն:

Մարի Պեյլերյանի **«Արտեմիսը»** (1902, Կահիրե, Ալեքսանդրապոլ) նպատակ ուներ «հայ իգական սեռի համար անկախ թերթ, նրա ազատ ձայնի» ամբիոն դառնալ, «ատով հայ կինը ցույց պիտի տար, թե ինքն ալ ունի մտային ընդունակություն ըմբռնելու և շոշափելու համար այն ամեն ընկերային ու հանրային կարևոր հարցերը, որոնք ուղղակի կամ անուղղակի կապ ունին իր կնոջական պարտականություններուն, իրավունքներուն ու պահանջներուն հետ»: «Արտեմիսը», թղթակցություններ ստանալով բազմաթիվ հայահոծ գաղութներից, անաչառ կերպով վեր էր հանում հայ կնոջ թերությունները, այն բոլոր երևույթները, որոնք կարող էին կնոջ անկումի պատճառ դառնալ, ներկայացնում էր գավառի կնոջ տխուր պատկերը, արթնացնում նրա՝ «նախապաշարումներով թմրած հոգին»:

Կանանց հասցեագրված պարբերականների շարքում լավագույն փորձերն իրավացիորեն վերագրվում են *Հայկանուշ Մառքին,* որի խմբագրած **«Ծաղիկ»** և **«Հայ կին»** հանդեսները իրենց որակով ու լրագրողական պատշաճ մակարդակով մինչև օրս մնացել են չգերազանցված:

«Ծաղիկը» (1905-1907 թթ., Կ.Պոլիս) նպատակ ուներ համախմբել կանանց գրական ուժերը և երիտասարդ սերնդի մեջ մտածելու և գրելու տենչ արթնացնել: Իրոք, «Ծաղիկ»-ին աշխատակցել են ժամանակի գրեթե բոլոր օժտված կին մտավորականները՝ *Սիպիլը, Զ. Գալեմքյարյանը, Արշակուհի Թեոդիկը, Զապել Եսայանը* և այլք: Հետևելով «Ծաղիկի» էջերին՝ կարելի էր հարուստ տեղեկություններ քաղել հնչպես Արևմտահայաստանի տարբեր գավառների կանանց կացության, այնպես էլ աշխարհի տարբեր երկրների կանանց շարժման մասին, որոնք մատուցվում էին հայ իրականության մեջ ողջամիտ ֆեմինիզմի գաղափարները արմատավորելու համար: Օրինակ բերելով արտասահմանյան գործընկերների արդյունավետ փորձերը՝ Մառքը մշտապես գործնական քայլերի էր կոչում հայ կանանց հանուն իրենց իրավունքների: Իսկ իր առաջնորդողներով փորձում էր փակել ֆեմինիզմի թյուր ընկալումներն ու մեկնաբանությունները:

«Ծաղիկը», որ ընդհատվել էր դեպքերի բերումով, խմբագրի տեղափոխության պատճառով, լուրջ հայտ էր: 22-ամյա Հայկանուշ Մառքը համարից համար ավելի ու ավելի էր ամրապնդում այն կարծիքը, որ օժտված հրապարակախոս ու կազմակերպիչ է, բարձր մակարդակի լրագրող: Այնպես որ տարիներ անց՝ 1919-ին, «Հայ կին» հանդեսի շլացուցիչ մուտքը անակնկալ չէր մտավոր հասարակայնության համար, այլ վաղուց սպասված վայելք: Ինչպես և «Ծաղիկի» դեպքում, «Հայ կին»-ի շուրջը հավաքվեցին ժամանակի գրեթե բոլոր նշանավոր կին մտավորականները: Հանդեսը թղթակիցներ ուներ նաև Փարիզում ու Միացյալ Նահանգներում:

Հայկանուշ Մառքը **«Հայ կինը»** հրատարակեց հասուն տարիքում՝ «Ծաղիկի» փորձն ունենալով, նրա տված դասերի հիման վրա: Երբ թերթում ես ամսագրի էջերը, զարմանում ես, թե ինչ խորաթափանցությամբ ու արվեստով էր կարողանում խմբագրուհին ամեն անգամ նորովի մոտենալ կանանց հարցին՝ երբեք չկրկնելով և հարցի նորանոր նիստեր երևան հանելով: Բայց «Հայ կինը» ձգում էր ոչ միայն իր հրապարակախոսությամբ, այլև լրագրական ինքնատիպ հնարքներով:

«Հայ կինը» դիմացավ ժամանակի փորձություններին ու հարատևեց 13 տարի շարունակ: Այն սիրելի զրուցակից դարձավ և հայ կնոջ ձայնը լսելի դարձրեց աշխարհի բոլոր կողմերում:

Ո՞ւր կորան այս ավանդույթները: Մի՞թե ներկայիս հայ կինը շպարվելուց ու տարաշխարհիկ կերակուրների բաղադրատոմսերից բացի այլ հետաքրքրություն ու ասելիք չունի: Նա՞ է փոխվել, թե՞ նրա նկատմամբ վերաբերմունքը:

Մոտ մեկուկես դար առաջ, երբ հայ կինն առաջին անգամ «հանդգնություն» ունեցավ իր պարբերաթերթով ասպարեզ մտնել ու իր խոսքն ասել հասարակայնությանը, այդ նորամուտը, երևույթ դարձավ և ունեցավ ոչ միայն կողմնակիցներ ու ջերմ պաշտպաններ, այլ նաև հակառակորդներ: Մասնավորապես, բավական բուռն արձագանքեց *Ստեփան Ոսկանը* իր **«Արևմուտք»** (1864, Փարիզ) հանդեսում: Տեսեք, ասում էր, գործվածքը ծալել է, ասեղը մի կողմ դրել, թելը կծկել, մատնոցը հանել, թուղթ է փռել իր առջև և գրիչով զրահավորված՝ նետվել աշխարհի ամենափշոտ դաշտը: *«...Օրիորդի գիրգ մատներու չը վայելեր Հայկին աղեղը կիթառի աղիք ընել և զայն պրկելով ազգային սեր երգել»,-* պնդում էր նա՝ խորհուրդ տալով նորելուկ խմբագրուհուն «բոլորովին թողնել հրապարակը»: Ամենայն հավանականությամբ Ստ. Ոսկանը հանդիմանության խիստ խոսքերի է արժանացել իր այս անզուսպ տողերի համար, այդ է պատճառը, որ «Արևմուտքի» հաջորդ իսկ համարում գրում էր. *«...Օրիորդներու կրթության թշնամի չենք... Մեզի համար կրթությունը, մանավանդ օրիորդի կրթությունը, արտաքին զարդ չէ, ավելի մտքի և սրտի կը վերաբերվի, քան թե մորթի... Փոխ առնունք ուրեմն Եվրոպայեն լույս և ոչ սնգույր»:*

Ցավոք, այսօր՝ մեկուկես դար անց, գերադասում ենք միայն Արևմուտքի սնգույրը, ոչ թե լույսը: Մի՞թե սա նահանջ չէ:

Անահիտ Հարությունյան

Հայկանուշ Մառք

1883-1966

Ծնվել է Կ.Պոլսում, Մարգար և Եպրաքսե Թոփուզյանների դուստրն էր: Մառք գրական կեղծանունն առաջացել է հոր անունից: Ավարտել է Եսայան վարժարանը, ապա կրթությունը շարունակել է մասնավոր դասերով: Նրա ուսուցիչն էր գրաբարի գիտակ Հակոբ Գուրգենը, որը մեծ դեր է խաղացել նրա՝ մայրենի լեզվի յուրացման և ճաշակի կատարելագործման գործում: 20 տարեկանում արժանացել է «Մասիս» թերթի երկրորդ գրական մրցանակին: 1905 թ. նշանվում է Վահան Թոշիկյանի հետ, նույն տարում էլ ծեռնամուխ լինում «Ծաղիկ» հանդեսի հրատարակմանը: 1907 թ. Հայկանուշ Մառքն ու Վահան Թոշիկյանն ամուսնանում և մեկնում են Զմյուռնիա, որտեղ Թոշիկյանին հրավիրել էին խմբագրելու «Արշալույս» և «Արծագանք» թերթերը: Այս թերթերում Մառքը շարունակում է իր աշխատանքը՝ վարելով կանանց բաժինը: 1909 թ. ամուսինները վերադառնում են Կ.Պոլիս, որտեղ Մառքը հայտնվում է հասարակական գործունեության էպիկենտրոնում: Սիպիլը հրավիրում է նրան «Ազգանվեր» ընկերություն: «Ահա տարի մը, որուն այդքան պետք ունինք»,- ասում է նա՝ ներկայացնելով Մայքին ընկերության անդամներին: Հետագայում, բացի «Ազգանվերից», Հայկանուշ Մառքը զբաղեցնում է ատենադպիրի պաշտոններ նաև այլ կազմակերպություններում: «Ծաղիկ» հանդեսի հրատարակումն ակամա ընդհատվել էր, բայց չէր մոռացված: 1919-ին՝ 14 տարի անց, Մառքը հիմնադրում է «Հայ կին» հանդեսը: 1932-ին «Հայ կինը» դադարեց լույս տեսնելուց: Դստեր մահից հետո Հայկանուշ Մառքը չկարողացավ աշխատել նախկին եռանդով և մի քանի տարի մեկուսացավ հասարակական կյանքից: 1936 թվականին նա համագործակցում է Վ. Թոշիկյանի հրատարակած «Նոր լուր» թերթի հետ՝ վարելով կանանց բաժինը: Միաժամանակ տպագրվում է այլ թերթերում ու հանդեսներում:

> *Մեր հետևում թողնում ենք մի արահետ, որը թեև տոնական կամ փայլուն ոչինչ չունի, բայց արահետ է, որին առանց ամաչելու ենք նայում, գյուղի մի նեղ արահետ, որով անցել ենք կատարելով մեր պարտականությունները իբրև կին, իբրև ամուսին և իբրև մայր: Հիմա նոր ուղի պիտի հարթենք, այն պիտի քաղաքի լուրջ ճանապարհ լինի, ավելի լայն, ավելի ուղիղ, ավելի ծիգ դեպի նպատակը: Այդ ճամփի վրա պիտի կռենք մեր պատասխանատվությունը, պիտի ստեղծենք մեր իրավունքները, պիտի դարբնենք մեր գործը՝ ամենևին չհեռացնելով մեզ մեր կանացի բնազդներից, մեր տնից: Այն պիտի տանի մեզ մի բարձունք, ուր մղում են մեզ մեր սեռի, մեր ազգի, մեր հայրենիքի վերածննդի ջղապիրկ իղձերը:*
>
> ***Հայկանուշ Մառք***
> **«Հայ կին» հանդեսի առաջնորդողից**

Առասպել եւ իրականություն

Գեղեցիկը կփրկի աշխարհն ու քաղաքական գործիչներին

Վերջերս ավստրալիացի գիտնականները այս տեսակետը հիմնավորեցին հետազոտություններով և բացահայտեցին, որ միջին արտաքինով քաղաքական գործչի համեմատությամբ՝ գեղեցկության համընդհանուր չափանիշներին համապատասխանող թեկնածուն լրացուցիչ ստանում է ընտրողների ձայների մինչև 2 տոկոսը: «Գեղեցկությունն ավելի կարևոր է թեկնածուների, քան նրանց համար, ով արդեն զբաղեցնում է ընտրովի պաշտոն, ասել կուզի՝ նշանակություն ունի միայն առաջին տպավորությունը: Հենց որ քաղաքական գործչի «նորության զգացումն» անցնում է, նրա արտաքին տվյալներն արդեն այնքան կարևոր չեն, որքան քաղաքական հայացքները»,- նշում է հետազոտության հեղինակ, տնտեսագետ Էնդրյու Լին՝ դրանով իսկ հիմնավորելով այն հանրահայտ ճշմարտությունը, թե «հագուստով դիմավորում են, իսկ ճանապարհում են խելքով»: Սակայն, ինչը հետաքրքիր է, թեպետ հրապուրիչ արտաքինն օգնում է թե՛ տղամարդ և թե՛ կին քաղաքական գործիչներին, պարզվում է՝ տղամարդիկ դրանից ավելի շատ են շահում, քանզի ընտրողների մի մասը բացասաբար է վերաբերվում կնոջ գեղեցկությանը: Թե ո՛ր մասը՝ հետազոտողները չեն ճշտում:

Երեք իմիջ

Փորձագետներն առանձնացնում են երեք իմիջային ռազմավարություններ, որոնց հետևում են ժամանակակից կին քաղաքական գործիչները:

«Տղամարդ» կանայք»: Օրինակներ՝ Մ. Թեթչերը՝ Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետը, ԱՄՆ-ի պետքարտուղար Կ. Ռայսը, Լիբերիայի նախագահ Է.Ջոնսոն-Սիրլիֆը: Կերպարը կառուցվում է համապարփակ պահպանողականության վրա, որը, որպես կանոն, ամրապնդվում է մասնագիտական գործունեությունը հաջող վարելով: Դիմում են աշխատանքի կոշտ եղանակների ու մեթոդների, սակայն, այդուհանդերձ, աչքի են ընկնում լավ հագնվելու և բարձրության վրա մնալու կարողությամբ: Չգերազանցված է մնում Մարգարեթ Թեթչերը, ով երբեք չէր օգտվում այն փաստից, որ ինքը գեղեցիկ կեսի ներկայացուցիչ է: «Հաջողության հագուստ» սա է այն կարգախոսը, որով «Երկաթե լեդին» առաջնորդվում էր հանդերձանք ընտրելիս:

«Գորշ մկնիկ» կանայք: Չունեն վառ արտահայտված իմիջ: Նրանք աչքի են ընկնում յուրօրինակությամբ հագուստ ընտրելիս, որը հաճախ չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին, և կոսմետիկայի լիակատար բացակայությամբ: «Գորշ մկնիկ» կնոջ իմիջ ունեն Գերմանիայի կանցլեր Ա. Մերկելը և Ֆինլանդիայի նախագահ Տ. Հալոնենը: Վերջինս իշխանության գլուխ գտնվելու ընթացքում հասցրել է իր համար վաստակել «անդադրում մարդու», սակայն դրա հետ մեկտեղ՝ «ազգի մոր» իմիջ:

«Սեքս-խորհրդանշան» կանայք: Սրանք առավել հաճախ իդեալական հագնված ու լավ խնամված կին քաղաքական գործիչներ են, որոնց իմիջը սակայն չի լրացվում քաղաքական գործունեության ասպարեզում հաջողություններով: Որպես օրինակ առավել հաճախ հիշատակվում է Լատվիայի նախագահ Վ. Վիկե-Ֆրեյբերգը, որը վաստակել է քաղաքականության մեջ ամենանորաձև կանանցից մեկի, սակայն դրա հետ մեկտեղ, առավել պակաս պրոֆեսիոնալի համբավ: Հայտնի է, որ նրա անձնական մոդելագործը կարում է նրա համար կոստյումներ իր իսկ մշակմամբ, ընդ որում, նրան երբեք հնարավոր չէր թելադրել՝ ինչպես հագնվել:

Հավելվածը հրատարակվում է ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակի աջակցությամբ

Խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան
Ձևավորումը՝ Վահե Դիոնեսյանի

Տպաքանակը՝ 7000 օրինակ